

ԶԳՈՒՇԱՑԻՐ ԱՂԱՆԴԻՑ

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

«Եհովայի Վկաներ»

(Մանրամասներին կարող եք ծանոթանալ մուտք գործելով մեր կայքի գրադարան)

Անվանումներ

Բացի հանրահայտ «Եհովայի վկաներ» անվանումից կազմակերպությունն ունեցել է նաև այլ անվանումներ, ինչպիսիք են. «Սիոնի դիտարանի հրատարակչական ընկերություն», «Դիտարանի ընկերություն», «Նոր Աշխարհի Ընկերություն»: Կազմակերպության հիմնադիր Չ. Ռասելն իր առաջին խմբակն անվանել էր «Գրքերի ուսումնասիրողներ», որն էլ հենց «Եհովայի վկաներ»-ի առաջին անվանումն է: Այնուհետև այն վերանվանվում է «Գրքերի ուսումնասիրողների ընկերության»: 1884թ. «Եհովայի վկաներ»-ը Փենսիլվանիայի նահանգում գրանցվում են «Սիոնի դիտարանի հրատարակչական ընկերություն» (**“Zion’s Watchtower Bible & Tract”**) անվամբ:

Դեկավարությունը

Հիմնադիր Չարլզ Թեյզ Ռասելը (1852-1916), Փենսիլվանիա նահանգի (ԱՄՆ) գալանտերային խանութների կիսագրագետ խանութպանը, կարողացավ լավ կազմակերպված կառույց ստեղծել և մշակել իր կեղծ ուսմունքի հիմնական սկզբունքները: Թեև ժամանակակից եհովականները այնքան էլ չեն սիրում հիշել վերջինիս, սակայն նա մի այնպիսի ավանդ ուներ կազմակերպության հիմնադրման գործում, առանց որի եհովականությունը չէր կարող գոյություն ունենալ:

1886թ. Ռասելը հրատարակում է «Գրքերի ուսումնասիրությունների» շարքի առաջին հատորը՝ **«Հազարամյա արշալույս»** վերնագրով: Այս բազմահատորյակի առաջին վեց հատորները գրել է կազմակերպության հիմնադիր Չարլզ Ռասելը, իսկ յոթերորդը՝ վերջինիս հաջորդը՝ Ջոզեֆ Ռուտերֆորդը: 1914թ.՝ Քրիստոսի գալուստի մարգարեական տարեթվի մոտենալուն զուգահեռ, Ռասելն սկսեց ավելի շատ անհամաձայնություններ ունենալ «ավանդական» բողոքականության հետ: Հենց այս ժամանակ էլ նա սկսեց **հեռանալ առ Սուրբ Երրորդությունն ու Հիսուս Քրիստոսի աստվածությունն ունեցած հավատքից**, որի համար բողոքականությունը Դիտարանին մեղադրեց այլափառության (heterodox) մեջ, և հատորը հատորի ետևից տպագրել իր վերոհիշյալ աշխատությունը: Իր մեկնաբանությունների ազդեցությանն անդրադառնալով՝ Ռասելն ասում էր, որ եթե մարդը 20 տարի շարունակ իր մեկնաբանություններով է սուսումնասիրել Աստվածաշունչը, իսկ հետո ինչ-ինչ պատճառով սկսել է կարդալ միայն Աստվածաշունչը, ապա որոշ ժամանակ անց նա կհայտնվի խավար վիճակում: Տեղին է նկատել, որ Ռասելը զբաղվել է նաև օկուլտիզմով, ինչի վկայությունն է իր ուսմունքում աշխարհի վերջի հաշվարկների ամրապնդման նպատակով օգտագործած բուրգաբանությունը:

Աղանդի պատմության սկիզբը կապված է կեղծիքի, ֆինանսական չարաշահումների և բազմաթիվ դատաբանությունների մի շարք խայտառակ և աղմկահարույց մերկացումների հետ: Ռասելը մեկ անգամ չէ, որ ընկել է տհաճ իրավիճակների մեջ: 1913թ. նրա կինը դատարանի միջոցով հասնում է ամուսալուծության, իսկ նրան ներկայացվում են խարդախության ու կեղծ վկայության մեղադրանքներ:

Եհովականների հաջորդ ղեկավարը **Ջոզեֆ Ֆրանկլին Ռուտերֆորդ** էր, որին կոչում էին «դատավոր»: Կրթությամբ իրավաբան լինելով, այս ոլորտում նա առանձնահատուկ ուշադրության չարժանացավ, բայց դարձավ Ռասելի հետևորդ և իրավաբանական օգնություն ցուցաբերեց նրան վերոհիշյալ անհամար դատական վեճերում (նաև «հրաշք» ցորենի հետ կապված աղմկոտ պատմությունը, որով Ռասելը մեծ փողեր աշխատեց՝ իր հետևորդներին վստահեցնելով, որ այն չտեսնված բերք է տալու, թեև այդ սպասումներն այդպես էլ չարդարացվեցին):

Ռուտերֆորդը դառնում է «Գրքի ուսումնասիրման ընկերության» փոխնախագահ: Ռասելի հրահանգի համաձայն, նախագահի պաշտոնը ստանձնող հաջորդ անձը իր լիազորությունները պետք է կիսեր «Դիտարանի» տնօրենների խորհրդի հետ, որոնց ցմահ նշանակել էր ինքը՝ Ռասելը: Սակայն նրա մահից անմիջապես հետո լուրջ պայքար է սկսվում Ռուտերֆորդի և տնօրենների խորհրդի միջև, որն ավարտվում է Ռուտերֆորդի հաղթանակով: Պայքարի ընթացքում կիրառվում են ֆիզիկական բռնություններ (օձիքից բռնած տնօրեններին դուրս են քարշ տվել նիստերի դահլիճից): Ի վերջո, Ռուտերֆորդը դառնում է կազմակերպության միանձնյա տիրակալը:

Ռասելի մահից որոշ ժամանակ անց, կազմակերպության նոր նախագահը՝ Ռուտերֆորդը, հրատարակում է «մարգարեությունների» վերջին յոթերորդ հատորը՝ «Կորած գաղտնիքը», որտեղ նա լիովին հերքում է Ռասելի գրածները: Այս գիրքը լուրջ տարածայնությունների առիթ է դառնում, ինչն ի վերջո՝ 1931թ. հանգեցնում է կազմակերպության բաժանմանը: Իր հետևորդներին առանձնացնելու-տարբերակելու նպատակով **Ռուտերֆորդը նրանց կնքեց նոր՝ «Եհովայի վկաներ» անվամբ**, որը պահպանվում է մինչև օրս: Նոր անվան ընտրությունը պայմանավորված էր այն խնդիրներով, որոնք իր կազմակերպության առջև դրեց Ռուտերֆորդը. **ոչ միայն ուսումնասիրել Աստվածաշունչը, այլև այդ ուսումնասիրությունների միջոցով մարդկանց վկայել Եհովա աստծո մասին**: Ուստի, նա իր ամբողջ ուշադրությունը դարձնում է քարոզչական աշխատանքին և նոր անդամներ հավաքագրելուն: 1927թ. նա՝ է մտցնում գրականությունը տներով մեկ տարածելու պարտադիր կարգը: Նույն նպատակով իր քարոզներում նա օգտագործում էր ժամանակի նորագույն միջոցները, մասնավորապես՝ **շարժական ռադիոկայանները**:

Ռուտերֆորդն անխղճորեն ճնշում էր իր կազմակերպության մեջ ի հայտ եկող ամեն տեսակ այլախոհություն և ընդդիմություն՝ երկաթյա ձեռքերով ամրապնդելով իր շարքերի միասնականությունը, հասնելով այն բանին, որ կազմակերպության անդամներն անառարկելիորեն ենթարկվեն իր կամքին, պահպանեն խիստ կարգապահությունը և անտրտունջ ծառայեն կազմակերպությանը:

Աղանդի երրորդ նախագահը **Նաթան Կնորն (կամ՝ Նորն)** էր: Նրա անձնական իշխանությունն այն չափերի հասավ, որի մասին Ռուտերֆորդը երազել անգամ չէր կարող: Կնորն առաջինն էր, որ **ուշադրություն դարձրեց յուրաքանչյուր անդամի քարոզչական գործունեության նախապատրաստությանը**: Կնորն ստիպում էր իր հետևորդներին ինքնուրույն քարոզել: Կնորն ուսմունքի մեջ նոր շեշտադրում մտցրեց՝ իրենց կոչելով «Նոր Աշխարհի Ընկերություն» (“New World Society”), և հայտարարեց, որ Արմագեդոնը Եհովայի ողջ ժողովրդին վերաբնակեցնելու է երկրի բոլոր ազգերի փոխարեն:

Կնորի մահից հետո, 1977թ. նրան փոխարինեց կազմակերպության այդ ժամանակվա գլխավոր գաղափարախոս **Ֆրեդերիկ Ֆրանցը**, որը վերահաշվարկել և վերախմբագրել էր աշխարհի վերջի բոլոր հնարավոր տարեթվերը: Քրիստոսի՝ իբրև թե տեղի ունեցած, անտեսանելի վերդարձը նա 1874 թվականից փոխադրեց 1914թ. (այն վերցնելով «Յոթերորդ օրվա աղվենտիստներ»-ից), իսկ 60-ականներին «Դիտարանի» էջերին հայտնվեց Քրիստոսի գալուստի **նոր տարեթիվը՝ 1975թ.**, որին պետք է նախորդեր Արմագեդոնը և Երրորդ

համաշխարհային պատերազմը: 1982թ. փետրվարին Ֆրանցի 59-ամյա զարմիկը՝ Ռեյմոնդ Ֆրանցը, կազմակերպության կառավարման մարմնի ղեկավարը, թերացավ և պաշտոնաթող արվեց: «Թայմ»-ի հետ ունեցած հարցազրույցում նա հայտարարեց, որ Դիտարանի Ընկերության կարգապահությունը «չափազանց դժան էր»: Նա հավատում էր, որ իր պաշտոնակալությունը հետևանքն էր այն համառ պնդումի, թե պետք է վստահել «միայն Աստվածաշնչին» և ոչ թե Աստվածաշնչի հետ զուգահեռ կարդալ եհովականների կողմից առաջարկվող այլ օժանդակ նյութեր: Ֆ. Ֆրանցը մահացել է 1992թ.՝ 98-ամյա հասակում:

Այժմ կազմակերպությունը ղեկավարում է 80-ն անց **Միլթոն Ջենշելը**՝ «Դիտարանի» ընկերության թվով հինգերորդ նախագահը:

Կենտրոնտեղիները

«Եհովայի վկաներ»-ի հոգևոր-վարչական համաշխարհային կենտրոնը Ղեկավար Մեկուսախումբն է (կամ՝ Կառավարող կորպորացիան), որը նրա հետևորդների կողմից ընդունվում է որպես «երկրի վրա Տիրոջ տեսանելի միջնորդ»: Այն կազմված է 15 մարդուց (այժմ արդեն 80-ն անց զառամյալ ծերուկներ) և գործում է Բրուքլինում (Նյու Յորք, ԱՄՆ) տեղակայված «Բեթել»¹ կենտրոնակայանում: Աշխարհի տարբեր տարածաշրջաններում քարոզչական գործունեությունը վերահսկում են Ղեկավար Մեկուսախմբի 95 մասնաճյուղերը:

ԱՊՅ տարածաշրջանի կենտրոնը Ռուսաստանում է՝ Սանկտ-Պետերբուրգի մերձակայքում գտնվող «Սուլենչնոյե» ավանում:

Ջեստորդների թիվը

Կազմակերպությունն իր համայնքներն ունի աշխարհի 203 երկրներում: 1975թ. ԱՄՆ-ում «Եհովայի վկաներ»-ն ունեին 55.4257 հետևորդ: 1946թ. ԽՍՀՄ-ում եղել են 8.633 վկաներ, 1956թ.՝ ավելի քան 17.000: 1988 թվականի դրությամբ նրանց թիվն աճել էր մինչև 752404-ի՝ 8.336 համայնքներում: Թեև «Եհովայի վկաներ»-ը սովորություն չունեն կազմել իրենց հետևորդների ցուցակները, ենթադրվում է, որ ողջ աշխարհում նրանց թիվը հասնում է 14 միլիոնի², որոնց մոտ մեկ երրորդն ակտիվիստներ են: Այս հպատակներն իրենց կազմակերպությանը պարտաճանաչ վճարում են սահմանված ներքին տուրքերը, որոնք գերազանցում են աշխարհիկ պետությունների քաղաքացիների վճարած հարկերին, ինչից կարելի է պատկերացում կազմել նրանց եկամուտների մասին:

«Սուրբ» գրքերը

«Եհովայի վկաներ»-ն իրենց ուսմունքի հիմք են համարում **Աստվածաշունչը**, սակայն առավելապես հիմնվում են **«Սուրբ Գրքի ուսումնասիրություններ»** յոթահտորյա աշխատության և **«Դիտարան»** ամսագրի վրա: Համաձայն մասնագետների գնահատականի, ինչպես տեսանք, **Աստվածաշնչի եհովական թարգմանությունը միանգամայն տարբերվում է դասականից:**

Գրականությունը

¹ «Բեթել» անունը կրում են նաև աշխարհի բոլոր երկրներում գտնվող նրանց ղեկավար կենտրոնները:

² Համաձայն ջատագովական հետազոտությունների կենտրոնի տվյալների աշխարհում յուրաքանչյուր րոպե մի նոր եհովական է ի հայտ գալիս (Αεάεηαι αδ Ααι δέει , "Ναεοί ααααι εα: Οί οαεεοαδί ύα ηάεού", Εαααι εα Αδαοηοαί ηα. Αεάεηαι αδα Ι άηηαι αι , 2000, ηδδ. 137):

«Եհովայի վկաներ»-ը տպագրում են «Դիտարան», «Սահմանագծին», «Արթնացեք» ամսագրերը, ինչպես նաև փոքրիկ թերթուհիներ և ամուր կազմով փոքրիկ գրքույկներ, ինչպիսիք են օրինակ՝ «Կյանք. ինչպե՞ս է այն ծագել», «Աստվածաշնչյան պատումների իմ գիրքը», «Երջանիկ դարձրու քո ընտանեկան կյանքը», «Ապրել հավիտյան» (որպես տարբերանշան կարելի է դիտել դրանց առաջին էջերում գրվող. ամեն իրավունք վերապահուած է **Watch Tower And Tract Society Of New York, Inc.**[այսինքն՝ Դիտարանի ընկերությանը կամ՝ «Եհովայի վկաներ»-ին], ինչպես նաև հրատարակչի անունը **International Bible Students Association, Brooklyn, New York** [այսինքն՝ Աստվածաշնչի ուսուցման միջազգային ասոցիացիա], տպաքանակը մի քանի միլիոն է): Այս հրատարակություններն աչքի են ընկնում պատկերող գունեղ ու գայթակղիչ նկարազարդումներով, միլիոնների հասնող տպաքանակով:

Պատմագաղափարական արմատները

Եհովականներն ունեն գաղափարական-պատմական երկու արմատ՝ «Յոթերորդ օրվա ադվենտիզմը» և XIX դ. վերջի ամերիկյան պոպուլիզմը:

Ադվենտիզմը XVIII դ. ԱՄՆ-ի, Անգլիայի և այլ երկրների բողոքական եկեղեցիների միջավայրում ի հայտ եկած **ռիվալվելիզմի կրոնափիլիսոփայական շարժման** անմիջական հետնորդներից է (ի միջի այլոց, այս շարժումից են ծագել նաև հոգեգալստական հարանվանությունները): **Ադվենտիզմի հիմնադիր է համարվում բապտիստ (մկրտական) քարոզիչ Ուիլյամ Միլերը (1772-1849 թթ.)**, որը նույնպես մի կիսագրարետ ամերիկացի էր: Միլերո ակտիվորեն հաշվարկում էր աշխարհի վախճանի ժամանակը: **Իսկ երբ նրան հիշեցնում էին Փրկչի այն խոսքը, որ ոչ մեկը չի կարող իմանալ Իր Երկրորդ գալստյան ո՛չ օրը, ո՛չ ժամը**, Միլերը, իբր, արդարանում էր, ասելով, թե կանխատեսում է ոչ թե օրը և ժամը, այլ՝ տարին: Ըստ նրա հաշվարկի վախճանը պիտի լիներ 1844թ. հոկտեմբերի 21-ին: Նրա համոզմունքը փոխանցվեց մոլորված ու խանդավառված մարդկանց, որոնք դադարեցին աշխատել և՛ սպիտակ հագուստներով հավաքվելով Նյու-Յորքի նահանգում գտնվող մի սարի մոտ, սպասում էին երկինք հափշտակվելուն: Բայց, ահա, օրն անցավ, և կրկին ոչինչ տեղի չունեցավ: Այդ օրը պատմության մեջ մնաց որպես **Մեծ հուսախաբության օր** (սա պաշտոնական տերմին է, որն օգտագործվում է կրոնագիտական դասագրքերում): Միլերի մարգարեությունները չիրականացան և նա՝ իր համախոհների հետ վտարվեց այս եկեղեցուց:

Ադվենտիզմի երկրորդ հիմնադիրը Ելենա Ուայթն է (1827-1915թթ.): Նա մի սովորական աղջիկ էր, բայց երբ լրանում է նրա 15 տարին, ինչ-որ մեկը քարով հարվածում է նրա դեմքին: Ելենան այլանդակվում է և երկար ժամանակ գտնվում է կյանքի ու մահվան սահմանագծին: Այնուամենայնիվ, նա դուրս է գալիս այդ վիճակից, որից հետո նրա մոտ սկիզբ են առնում տարօրինակ նույնություններ, որոնք նա անվանել է «երկնային հայտնություններ»: «Յոթերորդ օրվա ադվենտիստներ»-ը դրանք՝ Աստվածաշնչի հետ միասին, համարում են հավատքի ուսմունքի աղբյուրներ: Ճիշտ է, դեռևս նրա ժամանակակիցներն են մատնացույց արել, որ այդ «հայտնություններից» շատերը, այդ թվում նաև հրատարակված աղբյուրները, գրագողություն են, բայց դա ադվենտիստներին չչփոթեցրեց: Ե. Ուայթը և Ժ. Բեյթսն իրենց գործերում **հռչակեցին «շաբաթ» օրվա անփոփոխ լինելու վարդապետությունը**: Ժ. Բեյթսը, առաջ գնալով, հայտարարեց, որ Հայտնության 7-րդ գլխում նշված կնիքը շաբաթ օրը պահելն է և միայն **144.000 հոգի** են շաբաթը պահողները, որոնք կազմում են մնացորդ եկեղեցին՝ Աստծո հավատարիմները: Միլերի մահից մի քանի տարի անց՝ 1855-1863թթ. այս շարժումն իր վերջնական ձևավորումն ապրելով վերածում է մի նոր եկեղեցու՝ «**Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու**»:

Ուսմունքի մասին

«Եհովայի վկաներ»-ի աստվածաբանությունը ծայրաստիճան պարզունակ ու հակասական է և ուղղված է Սուրբ Գրքի, կրոնի, փիլիսոփայության և ֆիզիկայի պատմության սկզբունքներին անծանոթ մարդկանց: Աստվածաբանության հիմքը աղանդի հիմնադիրների անձնական հայացքներն են: Նրանց ուսմունքի սխալներն ու մոլորությունները մերկացնելու դեպքում, վերջիններս Աստվածաշնչի ամբողջական տեքստից առանձնացված և նենգափոխված մեջբերումներ ու մեկնաբանություններ են կատարում: **Նրանք, փաստորեն, պաշտում են աստծո անունը՝ (YHWH - «Եհովա»)**³, իբրև թե, անունը նույնացնելով էությանը, որով կուռքի են վերածում իր էությամբ անհասանելի Աստծո բազում անուններից մեկը: Նրանց կարծիքով Աստված երկնքում գրավում է մի որոշակի տեղ, ինչն իրականում ոչ մի կերպ չի համապատասխանում Աստծո էությանը: **Նրանք մերժում են Սուրբ Երրորդությունը՝ Սուրբ Հոգու անձնավորությունը և Հիսուս Քրիստոսի Աստվածությունը՝ «չնկատելով»** այն հաստատող աստվածաշնչային բազմաթիվ արտահայտությունները, որով, փաստորեն, հարում են դեռևս IV դ. դատապարտված արիոսական հերձվածին՝ բացարձակապես հեռանալով քրիստոնեությունից: **Նրանք մերժում են նաև Աստծո մարմնավորման ճշմարտացիությունը**, ուստի և՛ մեղքերի քավության ու փրկության իսկությունը, որը բազմիցս հաստատվում է Սուրբ Գրքում: Աղանդավորները ողորմելի հայեցողություն ունեն տարածության ու ժամանակի ծագման և փոխհարաբերության, աշխարհի հատկությունների հարցերի շուրջ, որից ելնելով, օրինակ՝ **նրանք պնդում են, որ Երկիրը հավիտենական է:** Նման օրինակները բազմաթիվ են: **Աղանդը՝ իր գոյության ընթացքում բազմաթիվ սուտ «մարգարեություններ» է արել աշխարհի կործանման ժամանակի մասին, որոնք են՝ 1872թ., 1874թ., 1914թ., 1925թ., 1975թ.:**

Եհովականների ուսմունքի համաձայն, լիարժեք փրկություն են գտնելու միայն 144 հազար հավատարիմները (օգտագործելով Հովհաննես Աստվածաբանի Հայտնության Գրքից): Դա նրանց հիմնադիր Չարլզ Թեյզ Ռասելի ուսմունքն էր՝ վերցված «Յոթերորդ օրվա ադվենտիստներ»-ի ուսմունքից: Սակայն այդ թիվն արագորեն սպառեց իրեն, քանի որ եհովականներն այժմ արդեն մի քանի միլիոն են, այսինքն, նշանակալիորեն ավելի շատ քան՝ 144 հազարը: Այստեղ ևս նրանք պետք է ինչ-որ ելք գտնեին ստեղծված նեղ վիճակից, ուստի և հայտարարեցին, որ 144 հազար հավատարիմները երկինք են բարձրանալու միայն առաջին հարության ժամանակ, իսկ մյուսներին ավելի ցածրակարգ հարություն է բաժին ընկնելու՝ նրանք ապրելու են «երկրային դրախտում», սնվելու են բանաններով ու նարինջներով և զբոսնելու են արմավենու պուրակում՝ բարի վագրերի, առյուծների և օձերի ընկերակցությամբ (սա նրանց սիրված պատկերն է): Նրանք աշխատելու են ոչ ավելի, քան օրական 4 ժամ, բնակարանը լինելու է հարմարավետ, կերակուրը՝ համեղ, և բոլորը հարկադրաբար երջանիկ են լինելու (նկատենք, որ այն շատ նման է կոմունիզմի գաղափարին): Իսկ առաջին 144 հազարը նրանց դիտելու և կառավարելու է երկնքից:

Եհովականները չեն հավատում հոգու անմահությանը: «Եհովայի վկաներ»-ը աստվածություն են սերմանում քրիստոնեական ուղղափառ եկեղեցիների նկատմամբ՝ հայտարարելով քրիստոնեական աշխարհի մեծ ուխտադրժության մասին և **կոչ անելով քրիստոնյաներին դուրս գալ այդ եկեղեցիներից:** «Քրիստոնեական աշխարհի» կրոններին

³ Ի միջի այլոց, Աստծո անունը Հին կտակարանի եբրայերեն բնագրում գրվում է չորս տառերի համադրությամբ՝ «YHWH»: Երբ ընթերցելու ժամանակ հրեաները հասնում էին այս արտահայտությանը, համաձայն Տասը պատվիրաններից երրորդի, որն ասում էր դատարկ տեղն Աստծո անունը չտաս, այն փոխարինում էին հոմանիշներով՝ Ադոնա (=Տեր), Սաբաուվ (=Ձորություն), Էլոհիմ, Էլ և այլ բառերով: Հետագայում 70 թարգմանիչները «YHWH»-ն թարգմանել են հունարեն Կիրոս (=Տեր) բառով (որտեղից էլ Կիրակին՝ այսինքն՝ Տիրոջ օր), իսկ եբրայերեն Էլոհիմը՝ Թեոս (=Աստված) բառով: Այս թարգմանությունից արված Հին կտակարանի (Նոր կտակարանում «YHWH»-ն երբևէ չի եղել) հետագա բոլոր թարգմանությունները, այդ թվում նաև հայերենը, պահպանել են նշյալ կարգը (մանրամասն տես Ս. Մայիլյանի «Ժամանակակից աղանդները Հայաստանում», էջ 160-169):

խոստանում են, որ կգրկվեն «իրենց հարստություններից» և «ամոթալի մերկացման» կենթարկվեն⁴: Հայտարարում են, որ «քրիստոնեական աշխարհը և այլ կեղծ կրոնները շուտով լիովին ոչնչացվելու են»⁵ և «սա Եհովայի արդար դատավճիռն է սուտ ուսուցիչների նկատմամբ, որն ի կատար է ածվելու»⁶: Նրանց համար **Հիսուս Քրիստոսի Խաչը չարի խորհրդանիշ է**, քանի որ այն պատժի գործիք է, որը հանդիպում է հեթանոսների մոտ (նկատենք, որ համաձայն XVIդ. ի հայտ եկած բողոքական ուղղություններից մեկի հիմնադիր ժան Կալվինի խաչը չի կարելի պաշտել, քանի որ այն պատժի գործիք է...): Այստեղից, անտեսելով Նոր Կտակարանի բազմաթիվ արտահայտությունները և պատմական գիտությունների տվյալները, նրանք պնդում են, որ Հիսուս Քրիստոս մահապատժի է ենթարկվել ոչ թե խաչի, այլ սյան վրա: Գիշտ նույն կերպ իրենց բացատրություններում օգտագործելով խաբեությունն ու հեթանոսական կրոնների մասին հրապարակումներից քաղված առանձին հատվածները, նրանք՝ **իրենց ծնողը հանդիսացող բողոքականության մանուքամբ, մերժում են Սրբազան Ավանդությունը, Եկեղեցու խորհուրդները, սրբապատկերները, տաճարները, վանքերը:**

1961թ. աղանդի առաջնորդները հայտարարեցին, որ արյան փոխներարկումը մահացու մեղք է: Սակայն, ելնելով այն հանգամանքից, որ բազում պետություններում այս առիթով տեղի ունեցող դատավարությունները լուրջ ճնշում են առաջ բերում «Եհովայի վկաներ»-ի նկատմամբ, «...աղանդի առաջնորդներն անսպասելիորեն հայտարարեցին, որ իրենց անդամներին այսուհետ **կթույլատրվի արյան փոխներարկումը:**

Կառույցը

«Եհովայի վկաներ» կազմակերպության կառույցը զարմանալիորեն նման է ՍՍԿԿ կառույցին՝ իր «դեմոկրատական ցենտրալիզմով», որտեղ Եհովական պաշտամունքի փոխարեն իրականացվում են «կուսժողովներ», «կուսակցական ուսման» և «կուսակցական համագումարների» դասեր («Եհովայի վկաներ»-ի ամենամյա Կոնգրեսները), իսկ **կոմունիզմի փոխարեն վկաներն ակնկալում են երկրային դրախտը**, որտեղ պետք է լինի առատ կերակուր և քիչ աշխատանք, որտեղ յուրաքանչյուրից վերցվելու է ըստ ունակությունների, և տրվելու է ըստ կարիքների:

Կազմակերպությունն ունի կուռ և զարգացած հիերարխիկ կառավարման ու ֆինանսական կառույց: Վարչատարածքային առումով աղանդը՝ որպես համաշխարհային կազմակերպություն, ունի վերից վար իջնող հետևյալ կառուցվածքը. բրուքլինյան համաշխարհային գլխավոր բաժանմունքից գործող ղեկավար մեկուսախումբ, լայնածավալ տարածքներում գործող լիազոր ներկայացուցիչներ, մասնաճյուղերի հանձնաժողովներ, շրջանների վերակացուներ, ժողովների ավագներ և շարքային անդամներ: Աղանդը պնդում է, որ ղեկավար մեկուսախումբին առաջնորդում է անձամբ Աստված:

Եհովականներն իրենց պաշտամունքը կատարում են անսագրերով: Այն տեղի է ունենում «թագավորական սրահներում»:

Ամենուր խստորեն գործում է **«ով հակաճառում է ղեկավարությանը, նա սատանային է ծառայում»** սկզբունքը: Գոյություն ունի նաև արգելանքների զարգացած համակարգ: Բոլոր օղակներում կանոնավոր կերպով կազմվում են մանրամասն հաշվետվություններ գործունեության մասին և փոխանցում դրանք կառույցի վերադասներին:

Բավական հետաքրքրական է այս կազմակերպության ֆինանսական գործունեությունը: «Եհովայի վկաներ»-ի մի նախկին հետևորդ պատմում է, թե ինչպես է դա

⁴ «Դիտարան», 01.03.94, էջ 13:

⁵ «Դիտարան», 01.05.97, էջ 17 և 01.07.94, էջ 7:

⁶ «Դիտարան», 01.03.94, էջ 13:

կատարվում. «Մարդիկ միանգամայն սխալ կարծիք ունեն այն մասին, թե այս կազմակերպության հետևորդները կրոնական գրականությունը ստանում և տարածում են անվճար կերպով: Իրականում յուրաքանչյուր հետևորդ պարտավոր է իր հաշվին ձեռք բերել որոշակի քանակով ամսագրեր և գրքեր, որոնք այնուհետև նա պետք է անվճար տարածի: Այսինքն, փաստորեն, գումարը վճարում է ոչ թե գնորդը, այլ վաճառողը, թեև համաձայն բոլոր փաստաթղթերի տարածողը անվճար է ստանում գրականությունը: Նման համակարգը թույլ է տալիս այս կազմակերպությանը ճարպկորեն խուսափել հարկերից»: Այս առումով «Եհովայի վկաներ» կազմակերպությունը միանգամայն կարելի է դիտել որպես **կոմերցիոն պաշտամունք կամ՝ գաղափարական ուղղվածություն ունեցող առևտրային բուրգ**: Գրականության տարածումն ու հոգևորությունը կոչվում է վկայություն կամ «պիոներական ծառայություն», որը պարտավոր է կատարել աղանդի յուրաքանչյուր անդամ:

Բնութագիրը

«Եհովայի վկաներ»-ն իրենց գործունեության գլխավոր ուղղություններից մեկն են համարում ուղղափառ եկեղեցիների դեմ պայքարը՝ չխորշելով օգտագործել անգամ ուղղակի և անամոթ կեղծիքը: «Եհովայի վկաներ» կազմակերպության ղեկավարները, ապակողմնորոշելու նպատակով, արգելում են իրենց շարքային անդամներին քրիստոնեական ուղղափառ գրականություն ընթերցել, այն անվանելով «սատանայական»:

«Եհովայի վկաներ»-ն իրենց երբեմնի ծնողի՝ բողոքականության նմանությամբ մերժելով եկեղեցու ավանդությունը, ակտիվորեն ստեղծում են ի՛ր ավանդությունը. Աստվածաշնչի նրանց «ազատ» թարգմանությունը կոչվում է Նոր Աշխարհի Թարգմանություն: Նրանք Աստվածաշնչից դուրս են բերում որոշ արտահայտությունների հատվածներ՝ **խեղելով դրանց իմաստն** ու շրջանցելով աղանդավորական տեսակետին ակնհայտորեն հակասող բազմաթիվ մասերը: Օրինակ, 1950թ. լույս տեսած Աստվածաշնչի անգլերեն թարգմանությունում, որ կատարվել է եհովականների կողմից, և կրում է «Նոր աշխարհ» (“New World Translation”), **նենգափոխիչները հունարեն տեքստերում միանշանակաորեն հանդիպող «Տեր» բառը Նոր Կտակարանի ավելի քան 200 տեղերում փոխարինել⁷ են «Եհովա» բառով:** Այսպիսով, Աստվածաշնչի կանոնական տեքստը հարմարեցվում է «Եհովայի վկաներ»-ի պարզունակ աստվածաբանությանը:

Քրիստոնեական տարբեր եկեղեցիները միասնական են եհովականների մասին ունեցած այն կարծիքով, որ վերջիններս ոչ մի ընդհանուր բան չունեն քրիստոնեության հետ: Իսկ աստվածաբանները գտնում են, **«Եհովայի վկաներ»-ի ուսմունքում առկա են Ավետարանի խեղաթյուրումներ⁸:**

Կազմակերպությունն իր գործունեության տարածքներում իրականացնում է բնակչության համապարփակ հաշվառում: «Եհովայի վկաներ» կազմակերպությունը հրաժարվում է պատիվ տալ ցանկացած ազգային դրոշի, մերժում է հայերնասիրությունը և սեփական երկրի պաշտպանությունը նվաճողներից՝ պաշտպանելով միմիայն իր շահերը:

- «Եհովայի վկաներ» կազմակերպության կրոնական վարդապետության ու նրա գործունեության մասին գրականության, ինչպես նաև այս աղանդի մեջ ներգրավված անձանց ծնողների բազմաթիվ նամակների ու հայտարարությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս կազմակերպությունն իր էությանը կրում է տոտալիտար բնույթ և իրենում ունի այնպիսի հորդորանք ու փորձառություն, որոնք

⁷ Ἀεἀεηαῖ ἀδ Ἄαι θεεῖ , “Νῆεοῖ ἀααῖ εἶ: Θῖ οἰεεοἰαδῖ ὑἱ ἡεοῦ”, Ἐçαῖ εἶ Ἀδαοηοἰ ἡ. Ἀεἀεηαῖ ἀδἱ ἰ ἀαηεῖ αῖ , 2000, ἡοδ 146.

⁸ «Տոտալիտար Աղանդները Ռուսաստանում» միջազգային քրիստոնեական սեմինարի եզրափակիչ Դայտարարությունից (16-20-ը մայիսի, 1994թ., Մոսկվա հրապարակված “Ἀεῖοδἱ εἶ ἰ ἀἱ” ամսագրի # 2. 1994թ.:

կարող են վնասել հետևորդի անձը և առողջությունը, նրա ընտանքին ու երեխաներին, ինչպես նաև ավանդական ազգային հոգևորությանն ու պետական շահերին:

«Եհովայի վկաներ» կազմակերպությունը քայքայիչ կրոնական կազմակերպությունների (տոտալիտար աղանդ, ապակառուցողական պաշտամունք) շարքն է դասվում ստորև նշվող փաստաթղթերում.

- 1996թ. դեկտեմբերի 15-ի «ՌԴ Դաշնային Ժողովի Պետական Դումայի ուղերձը «ՌԴ նախագահին՝ Ռուսաստանի հասարակության, ընտանիքի, քաղքացիների վրա որոշ կրոնական կազմակերպությունների ազդեցության վտանգավոր հետևանքների մասին» ՌԴ Պետական դումայի որոշում:
- 1994թ. մայիսի 16-20-ը Մոսկվայում տեղի ունեցած «Տոտալիտար աղանդները Ռուսաստանում» միջազգային քրիստոնեական սեմինարի եզրափակիչ հայտարարություն:
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատան 1995թ. նոյեմբերի 22-ի բանավոր նոտա:
- 1996թ. հունվարի 11-12-ը Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցած «Տոտալիտար աղանդները (քայքայիչ պաշտամունքներ) և մարդու իրավունքները» ռուսական գիտափորձնական խորհրդաժողովի մասնակիցների եզրափակիչ հայտարարությունը, ինչպես նաև այս խորհրդաժողովի մասնակիցների ընդունած «Ուղերձ ռուսաստանցիներին...» և «Ուղերձ զանգվածային լրատվության միջոցներին...» պաշտոնական ուղերձները:
- 1996թ. ՌԴ Պետական Դումայի «Քայքայիչ կրոնական կազմակերպությունների կողմից Ռուսաստանին սպառնացող ազգային վտանգի մասին» վերլուծական լրատուն:
- ՌԴ Առողջապահության նախարարության և բժշկական արդյունաբերության «Անձի, ընտանիքի, հասարակության առողջության վրա որոշ կրոնական կազմակերպությունների ազդեցության սոցիալ-բժշկական հետևանքների և տուժվածներին օգնություն ապահովելու միջոցառումների մասին զեկույցի» 1996թ. տեղեկատվական նյութը:
- 1995թ. Օրխուսում (Դանիա) տեղի ունեցած «Օկուլտային տոտալիտարիզմի պայթյունը ժամանակակից աշխարհում» միջազգային սեմինարի մասնակիցների ուղերձը:
- 1996թ. ապրիլի 16-19-ը Վարշավայում տեղի ունեցած դավանանքի ազատության մասին ԵԱՀԿ-ի սեմինարի փաստաթղթերը, մասնավորապես, գերմանական պատվիրակության ելույթի տեքստը:
- Բազմաթիվ այլ հեղինակավոր փաստաթղթեր՝ ներառյալ տարբեր երկրների դատական վճիռները:

Մեր էլեկտրոնային կայքի գրադարանում տես նաև **ՌԴ Գերագույն Դատախազության բնութագիրը՝ տրված «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության գործունեությանը, ՌԴ Առողջապահության Նախարարության ԲուժԱրդի («Մինզդրավնեդարոմ») Զեկույցը:**

Օգտագործված աղբյուրները.

- Անհատի և ընտանիքի պաշտպանության միավորում. «Տեղեկագիր աղանդների ուսումնասիրության. «Եհովայի վկաներ»:
- Սերժ Մայիլյան «Ժամանակակից աղանդները Հայաստանում»
- Աթաթնաի աժ Աաի ծեւի, "Նաեօի աաաի եա: Օի Օաեեօաժի սա նաեօս", Էչաաի եա Աժաօոօաի նա. Աթաթնաի աժա Ի աաիւի աի, 2000.
- "Ի Ի սսա ծաեաեի շի սա Ի ծաաի եչաօեե Յի նեե աաոօժօեօեաի աի և Ի եեօեւօի աի օաժաեօաժա", Նի ծաաի փի եե, Ի ենիւի Ի աժիւեե Ի Օաաե Ի Ի նիւ աիւի աի Ի աօժեաժօաօա, Ի ծաաի նեաաի սե Ի ենիւի Ի աժիւեե օի Ի ա ճոնիւի Ի ծաաի նեաաի Ի Ե Օաժեաե, Աաեաի ծի ա, 1997.
- "Ի ծի շժաի եա", Ի ծաաի նեաաի սե Եի օի ծի աօեի Ի Ի Ի ծի նաաօեօաեւիւիւեե յօժի աե, Էի օի ծի աօեի Ի Ի Ի Ի նօեւօաօեի Ի Ի սե օաի օրժ նա. Էժեի այ Էեի Ի նիւի աի, #2(5)2000, նօժ. 18.